## Բ.

## ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՆԵՑԻ

*Թաղուած է՝ Կ. Պօլսոյ՝ Իւսկիւտարի Ազգ. Գերեզմանատան վարի Թաղը. ունի մարմարեայ փառաւոր շիրիմ, որուն վրայէն քաղած եմ հետևեալ վեց տող արձանագրութիւնը.*

*Այս է տապան՝ տամբարանի*
*Զաքկիաս վրդ՝ապի՝ Նորոգ*
*ող՝ ՍԲ Կրծ՝պի եկեղեցոյն.*
*Նոր մանկայի՝ վաղջան*
*եղաւ՝ մերո՝*
*Թվին. ՌԿԶ՝*

*Ինչպէս կ՚երևի՝ տապանագիրս կը յայտնէ՝ թէ Զաքարիա կամ Զաքիաս Պատրիարք վախճանած է* (1066 + 551) = 1617*ին. բայց սխալ է այս, և պէտք է ըլլայ այն* 1640 *կամ* 1641. *զի Զաքարիա* 1636*ին երկրորդ անգամ Պատրիարք եղած ու նստած է մինչև* 1639։

*Եւ ահա թէ ինչ կը գրէ այս սխալի մասին Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան իւր Կ. Պոլսոյ ձեռագիր պատմութեան մէջ (էջ* 294 – 295)։

*« Այս Զաքարիա վարդապետ, որ և կոչի Զաքէոս եղև ապա Պատրիարգ Հայոց*
*« ի Կ. Պօլիս, ի Թուականին ՌՀԶ* (1076 + 551 = 1627)*. և յետոյ վախճանեալ*
*« Թաղեցաւ ի գերեզմանատանն Իւսքիւտարու։ Որոյ տապանաքարն ունելով գիր,*
*« յետ ամաց բազմաց ի լինել Ղափանցի Գէորգ վարդապետին Պատրիարգ ի Թըւականին ՌՄ* (1200 + 551 = 1751)*, նա զտապանաքար սորին նորոգելով կամելով, և զԹիւ վախճանին ո՛չ գիտելով, ի յիշատակէ արձաթեայ խաչի նորին*
*« հանեալ, գրեալ տուեալ է ի վերայ քարին զԹուականն զայն, որ ոչ է այնպէս։*
*« Զի է այն Թուական՝ շինուածոյ եկեղեցւոյն, և ո՛չ վախճանի նորին»։*

*Ուստի՝ քանի որ Պատմութիւնը կ՚աւանդէ թէ Զաքարիա* 1636 – 1639 *կրկին անգամ Պատրիարք էր՝ անոր մահը պատահած կրնայ ըլլայ* 1640 – 41։

## Գ.

## ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՂՐԵՑԻ

*Թաղուած է Պալըքլըի Ազգ. Գերեզմանատունը. ունի գեղեցիկ շիրիմ մը, զոր* 1856*ին նորոգել տուած է Խարամաճեան Մանուկ աղայի կողակից տիկին Ազգալի։*

*Անոր Տապանագիրն է այսպէս.*